



# Հայաստանի Հանրապետությունում հապալասի արտադրության արժեշղթա

(շուկայի ընդլայնման և շահույթի ավելացման  
հնարավորություններ)

Երևան, 2025 թ.



**Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Էկոնոմիկայի  
նախարարության տնտեսական հետազոտությունների  
վարչության կողմից**

## Ընդհանրական արդյունք

**Հետազոտությունը արդյունքները փաստում են, որ ՀՀ տարածքում առկա են անհրաժեշտ բնակլիմայական պայմանները հապալասի աճեցման և լայնածավալ արտադրության համար: Ուստի հաշվի առնելով ՀՀ աշխարհագրական դիրքը՝ կարող ենք ասել, որ խնդրո առարկա հատապտուղը ունի արտադրության և արտահանման մեծ ներուժ:**

- Ուսումնասիրվել է Վրաստանի Հանրապետության փորձը:
- Կազմակերպվել է հանդիպում հապալասի աճեցմամբ և վաճառքով զբաղվող տնտեսավարողների հետ:
- Կատարվել է շուկայի մոնիթորինգ, գնային քաղաքականության և վաճառքների ծավալի ուսումնասիրություն:
- Ուսումնասիրվել են հապալասի տնկիների աճեցման, արտադրման և իրացման պայմանները:
- Կատարվել է հաշվարկ հապալասի աճեցման գործընթացի մեկնարկից մինչև իրացման պահը՝ հիմք ընդունելով տնտեսավարողների կողմից տրամադրված տեղեկատվությունը:
- Ներկայացվել են առաջարկներ, ըստ որոնց կատարվել է հաշվարկ պետական բյուջեի վրա ազդեցության վերաբերյալ և հարկային հավանական մուտքերի մասին:
- Բացահայտվել է հապալասի արտադրման արդիականությունը ՀՀ շուկայում:

# Ի՞նչ է հապալասը և ինչո՞վ է օգտակար մարդկային օրգանիզմի համար



Հապալասը (*Vaccinium myrtillus*) փոքրիկ, կլոր, մուգ կապույտ հատապտուղ է, որը պատկանում է թթվասերների ընտանիքին: Այն աճում է հիմնականում սառը կլիմայական և լեռնային շրջաններում: Հայաստանում նույնպես կարելի է գտնել վայրի հապալաս, իսկ վերջին տարիներին զարգանում է ՀՀ-ում հապալասի գյուղատնտեսային արտադրությունը:

## Հապալասի պարունակում է հետևյալ օգտակար նյութերը

Հապալասն ունի բարձր կենսաբանական արժեք և պարունակում է՝

### Վիտամիններ՝

- Վիտամին C – ուժեղ հակաօքսիդանտ է, օգնում է իմունային համակարգին:
- Վիտամին K – օգնում է արյան մակարդմանը և ոսկրերի առողջությանը:
- Վիտամին A – տեսողության և մաշկի համար:
- B խմբի վիտամիններ – նյութափոխանակության և նյարդային համակարգի համար:

### Հանքանյութեր

- Մանգան (Mn) – ոսկրերի զարգացման և նյութափոխանակության համար:
- Կալիում – կարգավորում է արյան ճնշումը:
- Երկաթ – արյան կարմիր բջիջների ձևավորման համար:
- Կալցիում – ոսկրերի և ատամների առողջության համար:

### Այլ նյութեր՝

- Անտոցիանիններ – հակաօքսիդանտներ, որոնք տալիս են մրգին մուգ գույնը և պաշտպանում են բջիջները:
- Դիետիկ մանրաթելեր – բարելավում են մարսողական համակարգի աշխատանքը:

- ԱՏԳ ԱԱ «081040» ծածկագրով արտադրանքի արտահանումը 2024 թվականին կազմել է 6,601.1 մլն ԱՄՆ դոլար:
- ԵԱՏՄ մաքսային տարածքից արտահանումը 2024 թվականին կազմել է 1.8 մլն ԱՄՆ դոլար, որից 0.9 մլն ԱՄՆ դոլարը ՌԴ-ից և 0.88 մլն ԱՄՆ դոլար Բելառուսից:
- ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծումը կազմել է 126.8 մլն ԱՄՆ դոլար, որից 120.1 մլն ԱՄՆ դոլար ՌԴ, իսկ 4,2 մլն ԱՄՆ դոլար Բելառուս:
- Թուրքիայից արտահանումը 2024 թվականին կազմել է 3.9 մլն ԱՄՆ դոլար, կամ 585 տոննա:
- Թուրքիա ներմուծումը 2024 թվականին կազմել է 2.4 մլն ԱՄՆ դոլար կամ 1103 տոննա:
- Ադրբեջանից արտահանումը 2024 թվականին կազմել է 0.1 մլն ԱՄՆ դոլար կամ 26 տոննա:
- Ադրբեջան ներմուծումը 2024 թվականին կազմել է 0.6 մլն ԱՄՆ դոլար կամ 35 տոննա:
- Վրաստանից արտահանումը 2024 թվականին կազմել է 27,8 մլն ԱՄՆ դոլար, որից 24.2 մլն ԱՄՆ դոլար՝ դեպի ՌԴ,
- Վրաստան ներմուծումը 2024 թվականին կազմել է 0.9 մլն ԱՄՆ դոլար:
- Իրանի Իսլամական հանրապետությունից արտահանումը 2024 թվականին կազմել է 0.002 մլն ԱՄՆ դոլար, ներմուծում չի իրականացվել:

# Հապալաս. ներմուծում և արտահանում



Դեպի ՀՀ ԱՏԳ ԱԱ 081040 ծածկագրով արտադրանքի ներմուծման ծավալը, հազար ԱՄՆ դոլար

| h/h | Արտահանող երկիր | Ներմուծման ծավալ 2020թ. | Ներմուծման ծավալ 2021թ. | Ներմուծման ծավալ 2022թ. | Ներմուծման ծավալ 2023թ. | Ներմուծման ծավալ 2024թ. |
|-----|-----------------|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|
| 1   | Ընդհանուր       | 91                      | 222                     | 640                     | 1344                    | 1443                    |
| 2   | Պերու           | 34                      | 76                      | 360                     | 707                     | 507                     |
| 3   | Վրաստան         | 25                      | 39                      | 88                      | 201                     | 349                     |
| 4   | Մարոկկո         | 2                       | 26                      | 103                     | 222                     | 280                     |
| 5   | Պորտուգալիա     | 3                       | 1                       | 7                       | 63                      | 168                     |
| 6   | Այլ             | 27                      | 80                      | 82                      | 151                     | 139                     |

ՀՀ-ից ԱՏԳ ԱԱ 081040 ծածկագրով արտահանվող արտադրանքի ծավալը, հազար ԱՄՆ դոլար

| h/h | Ներմուծող երկիր | Արտահանման ծավալ 2020թ. | Արտահանման ծավալ 2021թ. | Արտահանման ծավալ 2022թ. | Արտահանման ծավալ 2023թ. | Արտահանման ծավալ 2024թ. |
|-----|-----------------|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|
| 1   | Աշխարհ          | 0                       | 0                       | 0                       | 2                       | 20                      |
| 2   | Կատար           | 0                       |                         |                         |                         | 14                      |
| 3   | ՌԴ              | 0                       | 0                       |                         | 2                       | 6                       |

Հայաստանում հապալասի բերքը դառնում է ավելի պահանջված իր վիտամինային բաղադրիչների շնորհիվ: Վերջին տարիներին զգալի աճ է գրանցվել դեպի ՀՀ հապալասի ներմուծման ծավալներում: Արտահանման ծավալները դեռևս չնչին են:

- 2024թ-ին ԱՏԳ ԱԱ «081040» ծածկագրով ՀՀ ներմուծված արտադրանքի ծավալը կազմել է 171 տոննա, կամ 1.44 մլն դոլար:
- 2024թ-ին ԱՏԳ ԱԱ «081040» ծածկագրով ՀՀ-ից արտահանված արտադրանքի ծավալը կազմել է մոտ 2 տոննա, կամ 0.02 հազար ԱՄՆ դոլար:

# Դաշտային հետազոտության արդյունքներ



- Ներկայումս ՀՀ տարածքում գործում է հապալասի տնկիների աճեցմամբ զբաղվող 2-3 ֆերմա: Նրանք հիմնականում վաճառում են հապալասի 2 տարեկան տնկիները 3,500 ՀՀ դրամ/հատ արժեքով, իսկ 3 տարեկան տնկիները՝ 5,000 ՀՀ դրամ/հատ արժեքով:
- Արարատի մարզում գործունեություն ծավալող տնտեսավարողը վերջին 3 տարիների ընթացքում ներմուծել և աճեցրել է մոտ 50,000 տնկի, իսկ 2024 թվականի ընթացքում՝ մոտ 5,000 տնկի:
- 2024 թվականին տնտեսավարողը իրացրել է մոտ 3 տոննա հապալասի բերք և բերքի շուտ հասնելով պայմանավորված, մայիս ամսվա սկզբին, բերքի մոտ 1 տոննան իրացվել է 12,000 ՀՀ դրամ/կգ:
- Մնացած բերքը իրացվել է 4,000-5,000 ՀՀ դրամ/կգ հունիսից օգոստոս ընկած ժամանակահատվածում:
- Արդեն իսկ Արարատի մարզի, Լոռու մարզի և Արագածոտնի մարզի ևս 3 տնտեսավարող, հարցված տնտեսավարողից ձեռք են բերել տնկիներ և տեղակայել են իրենց դաշտային և ջերմոցային տարածքներում՝ հապալասի արտադրություն սկսելու նպատակով:

Նկար 1-2. Հապալսի երկու և երեք տարեկան տնկի



Նկար 3. Հողում տեղակայված երեք տարեկան տնկի





## 2. ՀՀ-ում հապալասի արտադրման հնարավոր արժեշղթան (ինտենսիվ այգի և մշակող արդյունաբերություն)

# Հապալասի 10000 քմ հողային-գրունտային այգու կառուցման համար անհրաժեշտ դրամական միջոցների բացվածք



- Նախագծի նպատակն է՝ ստեղծել 10,000 քմ հապալասի ինտենսիվ այգի՝ հետագայում մշակող արդյունաբերության ոլորտում բերքը օգտագործելու նպատակով:
- Մոդել՝ գրունտային/հողային տեխնոլոգիա + ջերմատնային լուծումներ:
- Արտադրության նպատակ՝ ստանալ բարձր որակի հատապտուղ:

| Ներդրումային ուղղություններ          | Գումարը ՀՀ դրամով |
|--------------------------------------|-------------------|
| Հողի խառնուրդ                        | 38,437,500        |
| Հապալասի սածիլներ                    | 31,250,000        |
| Կաթիլային ոռոգման համակարգ           | 3,000,000         |
| Այլ ներդրումներ                      | 7,000,000         |
| Հողի նախապատրաստում (pH կարգավորում) | 5,000,000         |
| <b>Ընդհանուր ներդրումներ</b>         | <b>84,687,500</b> |
| Առաջին տարվա այգու պահպանման ծախսեր  | 5,000,000         |
| Երկրորդ տարվա այգու պահպանման ծախսեր | 4,500,000         |
| Երրորդ տարվա այգու պահպանման ծախսեր  | 4,000,000         |
| <b>Ընդհանուր</b>                     | <b>98,187,500</b> |
| Հատապտղի միջին գինը՝ կգ/ՀՀ դրամ      | 3,000             |

## Արտադրանքի գնային ցուցիչներ

- Հատապտղի իրացման միջին գինը (կգ)՝ 3000 դրամ,
- Գնի հաշվարկների հիմքում ընկած է շուկայական միջին արժեքը:

## Ներդրումային ծախսերի ամփոփում

Ներդրումային և պահպանման ընդհանուր ծախս՝

- հիմնական ներդրումներ՝ 84,687,500 դրամ,
- 3 տարվա պահպանման ծախսեր՝ 13,500,000 դրամ,
- ընդամենը՝ 98,187,500 դրամ:



- Ծախսերի 70–75% կազմում են հողի խառնուրդը և սաժիլները:
- Զերմատնային և ոռոգման համակարգերը ապահովում են բերքի որակ և կայունություն:
- Ծախսերը բաշխված են առաջին 3 տարիներին՝ ըստ ռիսկերի նվազեցման սցենարի:
- Վաճառքի գինը 3000 դրամ/կգ հնարավորություն է տալիս ձևավորել կայուն եկամուտ:

**Այս ներդրումային փաթեթը նախատեսված է բարձր շահութաբերությամբ հապալասի այգի ստեղծելու համար՝ հարկավոր ենթակառուցվածքներով, վերահսկվող տեխնոլոգիաներով և 3 տարվա հստակ ծախսային պլանով:**


## **Նախագիծն ապահովում է՝**

- կայուն գյուղատնտեսական եկամուտ,
- բարձր որակի արտադրանք,
- երկարաժամկետ ներդրումային արդյունավետություն:

# Հապալասի վաճառքի ծավալների և աճի կանխատեսում



## Հապալասի վաճառքի կանխատեսում



## Արտադրողականության աճ

- Հապալասի երեք տարեկան թվերի տնկարկից հետո հաջորդող տարիներից հետո սկսում են ավելի շատ բերք տալ:

Ուստի, յուրաքանչյուր հաջորդ տարում վաճառվող պտղի քանակն աճում է և հավելյալ եկամուտ է ձևավորվում:

## Իրացման գնի ինդեքսացիա

Շուկայում հատապտղի գինը կարող է մի քանի տոկոսով բարձրանալ՝

- գնաճի,
- պահանջարկի աճի,
- բարձր որակի արտադրանքի շնորհիվ:

Այս հաշվարկում ամեն տարվա եկամուտը փոքր աճով է ներկայացված՝ մոտ 0.5%–0.7% տարեկան աճ:

# Հապալասի վաճառքից ստացված շահույթի, ակնկալվող հարկերի և զուտ շահույթի կանխատեսում



Էկոնոմիկայի  
Նախարարություն


## Տարեկան զուտ ակնկալվող շահույթ


Սկսվում է **\$94,047.7**-ից առաջին տարում, ինչը պայմանավորված է հարկման մոդելով, երկրորդ տարում գրանցում է նվազում կապված հարկերի վճարումով և 15-րդ տարում հասնում է **\$86,956.7**

- Աճը բավական մեղմ է՝ մոտ 1% տարեկան
- Սա նշանակում է, որ բիզնես մոդելը ենթադրում է.
  - գնի փոքր աճ,
  - բերքատվության կայունացում,
  - շուկայի կանխատեսելի զարգացում:

## Ակնկալվող շահութահարկ

- Սկսվում է **\$16,928.6**-ից և 15-րդ տարում հասնում է **\$18,896.9**





## Զուտ դրամական հոսք


- Շահույթը սկսվում է \$164,062.5-ից և 15-րդ տարում հասնում է \$175,927.7:
- Աճը կայուն է և տարեկան մոտ 0.8%–1%:

Շահույթը ամբողջ ժամանակահատվածում բարձր է և չի նվազում ոչ մի տարի, ինչը նշանակում է՝

- բիզնեսը կայուն է,
- ծախսերի աճը վերահսկվող է,
- եկամուտներն աճում են կանխատեսելի տեմպով:

Բարձր և կայուն շահույթ = ցածր ռիսկ, բարձր վստահություն բիզնեսի վերադարձելիության վրա:

# Հապալասի 10000 քմ հողային-գրունտային հաշվարկային գործակիցներ



IRR-ը ցույց է տալիս նախագծի իրական եկամտաբերությունը՝ հաշվարկված պարբերական դրամական հոսքերով:

- 0-րդ տարի = 0%
  - 1-ին տարում = -73%
- Այս արժեքը նշանակում է, որ առաջին օրացուցային տարում ներդրումն ամբողջությամբ չի վերադարձվել, ինչը նորմալ է երկարաժամկետ նախագծերում:
- 2-րդ տարում = -38%
- Արդեն զգալի վերականգնում կա. բացասական IRR-ն արագ բարձրանում է:
- 4-րդ տարում = -3%
- Նախագիծը գրեթե անցնում է դեպի դրական եկամտաբերություն:
- 5-րդ տարուց սկսած՝ դառնում է դրական
    - 5-րդ տարի = 5%
    - 10-րդ տարի = 19%
    - 15-րդ տարի = 22%

Արտահայտում է՝

- Նախագիծը լիարժեք վերադարձելի է
- IRR = 22% — միջազգային ստանդարտով լավ ցուցանիշ

ROI-ին ցույց է տալիս ներդրված յուրաքանչյուր 1 դրամի արդյունավետությունը

- Տարի 1 – ROI = 26.30

Սկզբնական բարձր հարաբերակցություն, դեռևս ներդրումներն ամբողջությամբ չեն արտահայտվել:

- Տարի 2 – ROI = 21.79  
Ծախսերի աճի պատճառով բնական նվազում՝ նորմալ անցումային փուլ:

- Տարի 3–15 – ROI կայուն աճում է (21.98 → 24.31)
  - Արտադրողականության բարձրացում
  - Եկամուտների աճ
  - Ծախսերի օպտիմալացում
  - Կայուն արդյունավետություն

# Հապալասի հյութի արտադրման գործարանի կառուցման համար անհրաժեշտ գումարային միջոցների բացվածք



- Նախագծի նպատակն է՝ ստեղծել 10000 քմ հապալասի ինտենսիվ այգուց ստացված բերքի՝ տարեկան 31250 կգ., մթերման և վիտամիններով լի հյութի արտադրման գործարան
- Արտադրության նպատակն է ստանալ բարձրորակ հյութ՝ որակի վերահսկմամբ:

| Հյութի բաղադրիչներ 1 լիտրի համար            | Գումար ԱՄՆ դոլար |
|---------------------------------------------|------------------|
| Հապալաս 1.67 կգ 1 լիտր հյութ ստանալու համար | 8.77             |
| Շաքար / մեղր 50 գ                           | 0.08             |
| Կիտրոնի հյութ (թթվայնության համար) 20 մլ    | 0.02             |
| Բնական համեմունքներ կամ կայունացուցիչներ    | 0.05             |
| Ջուր 200 մլ                                 | 0.002            |
| Էլեկտրաէներգիա մեկ լիտրի համար              | 0.50             |
| Ապակե շիշ                                   | 0.30             |
| Պիտակ, կափարիչ, տուփ, լոգիստիկա             | 0.40             |
| Աշխատավարձ մեկ լիտրի հաշվարկով              | 1.44             |
| Շահութահարկ                                 | 1.33             |
| Մեկ լիտրի ինքնարժեք                         | 12.89            |

| Ներդրումային ուղղություններ                 | Գումարը ԱՄՆ դոլարով |
|---------------------------------------------|---------------------|
| Սարքավորումների արժեք                       | 70,000              |
| Գործարանում սարքավորումների տեղադրման արժեք | 5,000               |
| Աշխատավարձ                                  | 27,000              |
| Ընդհանուր ներդրումներ                       | 102,000             |
| Հյութի միջին գինը՝ լիտր/ԱՄՆ դոլար           | 18.0                |

## Արտադրանքի գնային ցուցիչներ

- Հյութի իրացման արժեք (լիտր) - 18 ԱՄՆ դոլար/համարժեք դրամ:
- Գնի հաշվարկների հիմքում՝ միջազգային շուկայում հապալասի հյութի միջինացված արժեք:

## Ներդրումային ծախսերի ամփոփում

Ընդհանուր ներդրումային և պահպանման ծախս՝

- հիմնական ներդրումներ (սարքավորումներ)՝ 75,000 ԱՄՆ դոլար:
- աշխատատեղ՝ 3:
- աշխատավարձային ֆոնդ՝ 27,000 ԱՄՆ դոլար (750 ԱՄՆ դոլար/աշխատատեղ):
- ընդամենը՝ 102.000 ԱՄՆ դոլար:

# Հյութի վաճառքի ծավալների և աճի կանխատեսում



Էկոնոմիկայի  
Նախարարություն

## Արտադրողականության կայուն և կանխատեսելի աճ

Վաճառքները յուրաքանչյուր տարի մոտավորապես աճում են՝

**\$1500 – \$2000** միջին տեմպով:

Այս աճը ցույց է տալիս, որ.


- պահանջարկը կայուն է,
- արտադրությունը չի նվազում,
- շուկան լավ է արձագանքում արտադրանքին:

## Գնի տարեկան ինդեքսացիա


Շուկայում հյութի գինը կարող է մի քանի տոկոսով բարձրանալ՝

- գնաճի,
- պահանջարկի աճի,
- բարձր որակի արտադրանքի շնորհիվ:

Այս հաշվարկում ամեն տարվա եկամուտը փոքր աճով է ներկայացված՝ մոտ 0.5%–0.7% տարեկան աճ:



# Հապալասի հյուրի վաճառքից ստացված շահույթի, վճարելիք ակնկալվող և զուտ շահույթի կանխատեսում




## Տարեկան զուտ ակնկալվող շահույթ

Սկսվում է **\$119,415.8**-ից ինչը պայմանավորված է հարկման մոդելով, 2-րդ տարում գրանցում է նվազում կապված հարկերի վճարումով և 15-րդ տարում հասնում է **\$118,169.9**

- Աճը բավական մեղմ է՝ մոտ 1% տարեկան: Սա նշանակում է, որ բիզնես մոդելը ենթադրում է.
  - գնի փոքր աճ,
  - արտադրության կայունացում,
  - շուկայի կանխատեսելի զարգացում:

## Ակնկալվող շահութահարկ

- Սկսվում է \$21,494.8-ից և 15-րդ տարում հասնում է \$25,546.2




## Զուտ դրամական հոսք

- Առաջին տարում՝ **–\$75,000** – ներդրումային ծախս է (սկզբնական կապիտալ):
- 2-րդ տարուց սկսած՝ թվերը դառնում են **դրական և աճող**՝ հասնելով **\$116,940.2**:

## Դրամական արտահոսք

- Դրամական արտահոսքը աճում է հարկային պարտավորություններ ի հայտ գալու հաշվին, ինչն էլ իր հերթին նվազեցնում է դրամական ներհոսքը, որը, սակայն, տարիների ընթացքում աճում է:

# Հապալասի հյուրի վաճառքի հաշվարկային գործակիցներ




IRR-ը ցույց է տալիս նախագծի իրական եկամտաբերությունը՝ հաշվարկված պարբերական դրամական հոսքերով:

- 0-րդ տարի = 0%
- 1-ին տարում = 58%  
Այս արժեքը նշանակում է, որ առաջին օրացուցային տարում ներդրումն ամբողջությամբ վերադարձվել են, ինչը նշանակում է, որ նախագիծը անցնում է դեպի դրական եկամտաբերություն:

ROI-ին ցույց է տալիս ներդրված յուրաքանչյուր 1 դրամի արդյունավետությունը


- Տարի 1 – ROI = 159.2
- Տարի 2 – 132.8, անկումը կապված է գործառնական ծախսերի ավելացմամբ: Այնուհետև 3-րդ տարուց սկսած գրանցվում է կայուն աճ, պայմանավորված ծախսերի խելամիտ կառավարմամբ և գների ինդեքսավորմամբ:

# Արժեշդթայի իրականացման դեպքում վաճառքների և զուտ շահույթի կուտակային հաշվարկային կանխատեսումներ



- ### Կուտակային վաճառքի ցուցանիշը ցույց է տալիս՝
- Ցույց է տալիս ամբողջ վաճառվածի կուտակված արժեքը տարիների ընթացքում:
  - Տարի 1—ն սկսվում է **\$500,888.8** և աստիճանաբար աճում է մինչև **\$7,782,083.4** (Տարի 15):
  - Աճը գծային և կայուն՝ նշանակում է կանխատեսելի և ստաբիլ շուկային պահանջարկ:
- ### Կուտակային զուտ շահույթ՝
- Տարի 1-ում նշված է **\$213,463.4**, և Տարի 15-ում՝ **\$2,890,176.6**: Սա ցույց է տալիս՝ վաճառքով ստացված զուտ փողի կուտակումը (եկամուտ – ծախսեր և հարկեր) ժամանակի ընթացքում:
  - Հստակ դրական և կայուն աճ՝ նախագծի ֆինանսավորման ստաբիլ վերադարձ:

# Արժեշրթայի իրականացման դեպքում շահույթից վճարվելից ակնկալվող շահութահարկի ցուցանիշներ



## Շահութահարկի


### վճարումը

ակնկալվում է սկսված երկրորդ տարվանից : Ակնկալվում է շահութահարկի կայուն աճ արժեշրթայի իրականացման ընթացքում վաճառքի աճի և գործառնական ծախսերի մակարդակի պահպանման պարագայում:  
Տասնհինգ տարում արժեշրթայի վճարված շահութահարկը կազմում է \$579,645.4

# Արժեշղթայի իրականացման դեպքում հաշվարկային գործակիցներ



Էկոնոմիկայի  
Նախարարություն



## Ընդհանուր ROI (Return on Investment)

- Սկսվում է՝ **49.34%**, 2-րդ տարում նվազում մինչև **41.03%**,
- Այնուհետև կայուն աճ մինչև **47.41%** (15-րդ տարում):  
Սկզբնական տատանումից հետո ներդրումների վերադարձը կայուն բարձրանում է՝ ցույց տալով, որ նախագիծը տարիների ընթացքում դառնում է ավելի արդյունավետ:

## Ընդհանուր ակտիվների եկամտաբերություն (ROA)

- Սկիզբ՝ **126.6%**, 2-րդ տարում նվազում մինչև **105.7%**,
- Այնուհետև կայուն աճ մինչև **129.2%**:  
Ակտիվները շատ արդյունավետ են օգտագործվում, և ամբողջ արժեքային շղթան ստեղծում է բարձր եկամուտ հարաբերականորեն փոքր ակտիվների հաշվին:

## Ջուտ շահույթի մարժա (Net Profit Margin)

- Տատանվում է **35.3%–38.2%** միջակայքում,
- Ունի դանդաղ, բայց կայուն աճ:  
Եկամուտների զգալի մասը վերաձվում է մաքուր շահույթի, ինչը վկայում է ծախսերի լավ կառավարման և արտադրության արդյունավետության մասին:

**IRR** Սկիզբ՝ **-50.7%**, այնուհետ արագ աճ մինչև **44.1%** 15-րդ տարում:

Սկզբնական փուլում մեծ կապիտալ ներդրումների պատճառով IRR-ը ցածր է, սակայն նախագիծը արագ դառնում է ֆինանսապես շատ գրավիչ երկարաժամկետ հեռանկարում:

- Զուտ շահույթի մարժան պահպանվում է ~35–38% միջակայքում, ինչը վկայում է ծախսերի արդյունավետ կառավարման մասին:
- Ներդրումների եկամտաբերությունը (ROI) կայուն է և աճում է մինչև ~47%, հաստատելով ծրագրի երկարաժամկետ արդյունավետությունը:
- Ներքին եկամտաբերության նորման (IRR) հասնում է ~44%, ինչը նախագիծը դարձնում է բարձր գրավիչ ներդրողների համար:
- Ակտիվների եկամտաբերությունը (ROA >120%) ցույց է տալիս, որ ողջ արժեշղթան աշխատում է բարձր արտադրողականությամբ:

## Եզրակացություն.

- Վաճառքի եկամուտները (հապալաս և հյութ) ցուցադրում են կայուն տարեկան աճ, ապահովելով կանխատեսելի դրամական ներհոսքեր:
- Հյութերի արտադրությունը ստեղծում է կայուն դրական զուտ դրամական հոսք, իսկ սկզբնական ներդրումները արագ փոխհատուցվում են:
- Ամբողջ արժեշղթան՝ հումքի արտադրությունից մինչև վերջնական վերամշակում, ֆինանսապես կայուն է, բարձր շահութաբեր և ներդրումային տեսանկյունից գրավիչ երկարաժամկետ հեռանկարում:

Սահիկ 1 - <https://www.healthline.com/nutrition/foods/blueberries#nutritional-composition>

Սահիկ 3 -

[https://www.trademap.org/Country\\_SelProductCountry\\_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c081040%7c%7c%7c6%7c1%7c1%7c2%7c2%7c1%7c2%7c1%7c1%7c1](https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c081040%7c%7c%7c6%7c1%7c1%7c2%7c2%7c1%7c2%7c1%7c1%7c1)

Սահիկ 8 - <https://www.agro911.am/ecommerce/townakimikatner-c144734263/ttow-torf-p593171097>

Սահիկ 14 - <https://www.ebay.com/itm/233728995665>,  
<https://www.ebay.com/itm/317584026692?>



# Հնորհակալություն